

Չափագիտության ոլորտի թեսթավորման հարցաշարը

1	Հարցեր 2	Պատասխաններ 3
1.	Ի՞նչ է չափումների կատարման մեթոդիկան:	<ol style="list-style-type: none"> 1. Չափման միջոցի ստուգաչափումը որևէ կազմակերպությանն ամրագրելն է 2. Որևէ ֆիզիկական մեծության արժեքի որոշման ժամանակ չափման պատիկության որոշելն է 3. Գործողությունների և կանոնների ամբողջություն, որոնց կատարումն ապահովում է երաշխավորված ճշտությամբ չափման արդյունքների ստացումն ընդունված մեթոդի համաձայն
2.	Որո՞նք են չափումների միասնականության ապահովման ազգային համակարգի ենթահամակարգերը:	<ol style="list-style-type: none"> 1. Իրավական, տեխնիկական և կազմակերպական ենթահամակարգերը 2. Ֆունկցիոնալ և բլոկ սխեմային ենթահամակարգերը 3. Չափման միջոցների տեսակների, անվանումների և չափման սխալանքների սահմանման ենթահամակարգերը
3.	ՀՀ-ում ո՞վ է լիցենզավորում իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին չափման միջոցներ արտադրելու և նորոգելու գործունեությունը:	<ol style="list-style-type: none"> 1. Չափագիտության ազգային ինստիտուտը 2. Չափագիտության ազգային մարմինը 3. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը
4.	Մեկնաբանել ի՞նչ բան է չափման միջոցը:	<ol style="list-style-type: none"> 1. Որևէ ֆիզիկական մեծության արժեք չափող սարք 2. Տեխնիկական սարք, որը նախատեսված է չափում կատարելու համար, ինքնուրույն կամ այլ լրացուցիչ սարքի հետ 3. Սարք, որը կարելի է գործարկել մեծության միավոր վերարտադրելու համար
5.	ՀՀ-ում ո՞ր կազմակերպությունն է մշակում ազգային ստուգաչափման սխեմաները:	<ol style="list-style-type: none"> 1. Չափագիտության ազգային մարմինը 2. Չափագիտության ազգային ինստիտուտը 3. Տնտեսվարող սուբյեկտները
6.	Որո՞նք են մեծությունների միավորների միջազգային համակարգի (ՍԻ) հիմնական միավորները:	<ol style="list-style-type: none"> 1. <ul style="list-style-type: none"> - զանգվածի միավոր՝ գրամ, - երկարության միավոր՝ սանտիմետր, - ժամանակի միավոր՝ ժամ 2. <ul style="list-style-type: none"> - երկարության միավոր՝ միլիմետր, - ժամանակի միավոր՝ րոպե, - զանգվածի միավոր՝ կարատ 3. <ul style="list-style-type: none"> - ժամանակի միավոր՝ վայրկյան, - զանգվածի միավոր՝ կիլոգրամ, - երկարության միավոր՝ մետր, - էլեկտրական հոսանքի ուժը՝ ամպեր, - թերմոդինամիկական ջերմաստիճանը՝ կելվին, - նյութի զանգվածը՝ մոլ, - լույսի ուժը՝ կանդելա
7.	Որո՞նք են Չափումների միասնականության ապահովման ազգային մարմնի գործառույթները թվարկել մի քանիսը:	<ol style="list-style-type: none"> 1. <ul style="list-style-type: none"> - պետական քաղաքականության իրականացումը նշված բնագավառում, - չափման միջոցի արտադրության և նորոգման գործունեության լիցենզավորումը - չափման միջոցի ստուգաճշտման իրավունքով իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հավատարմագրումը 2. <ul style="list-style-type: none"> - իրականացնում է չափման միջոցների ստուգաչափումը, 3. <ul style="list-style-type: none"> - ապահովում է ազգային էտալոնների միջպետական և միջազգային էտալոնների հետ բաղդատումը, - իրականացնում է չափման միջոցների պետական փորձարկումներ

1	2	3
8.	Ո՞վ է ՀՀ կառավարությունը ներկայացնում ՀՀ-ում թույլատրվելիք մեծությունների միավորների վերաբերյալ առաջարկությունները:	<ol style="list-style-type: none"> 1. Չափագիտության ազգային մարմինը 2. Չափագիտության ազգային ինստիտուտը 3. Նախարարությունները, Գերատեսչությունները
9.	ՀՀ-ում ո՞վ է հավատարմագրում չափման միջոցների ստուգաճշտում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին:	<ol style="list-style-type: none"> 1. Չափագիտության ազգային ինստիտուտը 2. Նախարարությունները, Գերատեսչությունները 3. Չափագիտության ազգային մարմինը
10.	ՀՀ-ում ո՞վ է վարում չափագիտության բնագավառում հավատարմագրված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի գրանցամատյանը:	<ol style="list-style-type: none"> 1. Չափագիտության ազգային ինստիտուտը 2. Չափագիտության ազգային ինստիտուտի համապատասխան բաժինները 3. Չափագիտության ազգային մարմինը
11.	Որո՞նք են Չափագիտության ազգային ինստիտուտի գործառույթները: Թվարկել մի քանիսը:	<ol style="list-style-type: none"> 1. <ul style="list-style-type: none"> - իրականացնում է պետական չափագիտական հսկողություն, - սահմանում է պետական չափագիտական վերահսկողության բնագավառները, 2. <ul style="list-style-type: none"> - լիցենզավորում է չափման միջոցներ արտադրող և նորոգող կազմակերպություններին, - կատարում է չափման միջոցների ստուգաճշտում, 3. <ul style="list-style-type: none"> - պահում, պահպանում է ազգային էտալոնները, - կատարում է չափման միջոցների պետական փորձարկումներ, չափման միջոցների ստուգաչափում
12.	ՀՀ-ում ո՞վ է իրականացնում ազգային էտալոնների պահումը, պահպանումը:	<ol style="list-style-type: none"> 1. Էտալոնը ստեղծող կազմակերպությունը 2. Հավատարմագրված կազմակերպությունները 3. Չափագիտության ազգային ինստիտուտը
13.	ՀՀ-ում ո՞ր կազմակերպություններին է վերապահված իրականացնել օրենսդրորեն ոչ կանոնակարգվող ոլորտներում կիրառվող չափման միջոցների ստուգաճշտում և չափումների կատարման մեթոդիկաների վկայագրում:	<ol style="list-style-type: none"> 1. Տնտեսվարող սուբյեկտներին 2. Չափագիտության ազգային ինստիտուտին 3. Հավատարմագրված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին
14.	Ո՞վ է իրավասու արգելելու չափման միջոցների արտադրությունը:	<ol style="list-style-type: none"> 1. Չափագիտության ազգային ինստիտուտը 2. Գլխավոր պետական տեսուչը 3. Պետական տեսուչները
15.	Ի՞նչ կարգով է իրականացվում չափման միջոցների ներկրումը Հայաստանի Հանրապետություն:	<ol style="list-style-type: none"> 1. Օրենքով սահմանված կարգով չափման միջոցի տեսակը հաստատելուց հետո 2. Իր սերտիֆիկատի ճանաչումով 3. Հաշվի առնելով միջպետական համաձայնագիրը, առևտրական գործարքների վերաբերյալ
16.	Ո՞ր չափման միջոցներն են, որոնք ենթակա չեն ստուգաչափման և կարող են կիրառվել ՀՀ-ում:	<ol style="list-style-type: none"> 1. Այն չափման միջոցները, որոնք կիրառվում են ոչ օրենսդրորեն կանոնակարգվող ոլորտներում 2. Որոնք ժամանակին ստուգաչափվել են արտադրող կազմակերպություններում թողարկման ժամանակ 3. Որոնց ստուգաչափումը ՀՀ-ում հնարավոր չէ իրականացնել
17.	Ո՞ր դեպքում չափման միջոցը կարող է ներկրվել ՀՀ տարածք առանց տեսակի հաստատման սերտիֆիկատի:	<ol style="list-style-type: none"> 1. <ul style="list-style-type: none"> - ներմուծվում են ՀՀ տարածք ցուցահանդեսներում ցուցադրելու համար 2. <ul style="list-style-type: none"> - ՀՀ – ում տվյալ չափման միջոցի փորձարկումները հնարավոր չէ իրականացնել 3. <ul style="list-style-type: none"> - չափման միջոցի տեսակը հաստատված է ԱՊՀ տարածքում

1	2	3
18.	Ո՞վ է իրականացնում չափման միջոցների ստուգաչափումը:	<ol style="list-style-type: none"> 1. Ցանկացած կազմակերպություն, որը պայմանագրային հիմունքներով մուծումներ է կատարում չափագիտության ազգային մարմնին 2. Չափագիտության ազգային ինստիտուտը 3. Այն կազմակերպությունները, որոնք ունեն ստուգաչափման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ և մասնագետներ
19.	Ո՞վ է իրավասու արգելելու ստուգաչափված չափման միջոցի շահագործումը, եթե չափման միջոցը սխալ ցուցմունք է տալիս:	<ol style="list-style-type: none"> 1. Գլխավոր պետական տեսուչը 2. Պետական տեսուչները 3. Չափագիտության ազգային ինստիտուտը
20.	Ի՞նչ տեղեկատվություն պետք է պարունակի չափման միջոցի ստուգաչափման դրոշմը:	<ol style="list-style-type: none"> 1. <ul style="list-style-type: none"> - ստուգաչափում կատարող կազմակերպության նշանը, - տարեթիվը, - ստուգաչափողի նշանը 2. <ul style="list-style-type: none"> - ստուգաչափում կատարող կազմակերպության նշանը, - ստուգաչափված չափման միջոցի տեսակը, - չափման միջոցի ճշտության դասը 3. <ul style="list-style-type: none"> - չափման միջոցի սխալանքը, - դրոշմի գործողության ժամկետը, - չափման միջոցի գործարանային համարը